ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 22-ին կայացավ Վանաձոր համայնքի Ավագանու նիստ, ուր միաձայն ընդունվեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և Լոռու մարզպետ Հ. Քոչինյանի առաջարկը՝ մարզի մանկական կրթօջախներն անվանել համաքրիստոնեական և հայազգի նշանավոր սրբերի անուններով: Հայաստանի բոլոր մարզերում սա համանման առաջին նախաձեռնությունն է:

Ի դեպ, Գուգարաց թեմի Լոռու մարզում թեմական առաջնորդի և մարզպետի նախանձախնդրությամբ և համագործակցության արդյունքում դեռևս 1998 թ. «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան, որպես հանրակրթական պարտադիր առարկա, Հանրապետությունում առաջին անգամ սկսեց դասավանդվել մարզի հանրակրթական դպրոցներում:

Հուսով ենք, որ այս շարունակական համագործակցությունն իր բարեբեր պտուղները կունենա նաև ապագայում:

ՀՆԵՎԱՆՔԻ ԽԱՉԻ ՕԾՈՒՄԸ

Նոյեմբերի 25-ը, որպես պատմական և հիշարժան օր, դեռ երկար կմնա կուրթանցիների և հարակից գյուղերի բնակիչների հիշողություններում, քանզի այդ օրը մեծ հանդիսությամբ օծվեց և տեղադրվեց Կուրթանի ձորում գտնվող և VII-XII դարերի ընթացքում կառուցված Հնեվանքի գմբեթի խաչը:

Հիրավի, պատմական էր այս օրը: Անհիշելի ժամանակներից խոնարհված և լքված վանական այս համալիրը, պետական բյուջեից հատկացված միջոցներով, ահավասիկ կենդանության նոր շունչ է առնում: Վանքի վերակառուցման համալիր աշխատանքները շարունակական են:

Թեմի կենսագրության մեջ, հիրավի, պատմական և հոգեպարար այս արարողությանը, ի գլուխ ունենալով Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանին, ներկա էին Լոռու մարզպետարանի ներկայացուցիչներ, համայնքապետեր, մեծ թվով երիտասարդներ, ուսուցիչներ և աշակերտներ: Համաձայն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ խաչը լվացվեց նախ ջրով և գինով, ապա Սրբազան առաջնորդի ձեռամբ օծվեց Սրբալույս Մյուռոնով: Եվ ինչպես իր քարոզում շեշտեց Սեպուհ սրբազանը՝ «Հնեվանքի այս հիասքանչ եկեղեցու խաչը սրբագործվեց՝ վերածվելով այն հաղթության զենքի և ամրության վահանի՝ ի մխիթարություն և ի օրհնություն Լոռվա աշխարհի մեր հավատացյալների»: Սրբազան Հայրն իր խոսքում ներկաներին, մասնավորապես երիտասարդությանը և աշակերտությանը հորդորեց քրիստոնեական արժեքներով կենցաղավարել և հավատարիմ մնալ մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

Արարողության ավարտին գեղարվեստական համարներով՝ ասմունքով ու հոգևոր երգերով, հանդես եկան Կուրթանի հանրակրթական դպրոցի սաները: Տոնական միջոցառումն ավարտվեց օրհնված մատաղի ճաշկերույթով սիրո մթնոլորտում:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՏՆՈՐԴՆԵՐ» ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ԳՐԱՎԵՑ ԵՐՐՈՐԴ ՏԵՂԸ

Նոյեմբերի 30–ին Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում մեկնարկեց Է. Խաչատրյանի անվան փողային նվագախմբերի հանրապետական մրցույթ-փառատոնը: Մրցույթ-փառատոնին մասնակցեցին բացառապես փողային նվագարաններից կազմված նվագախմբեր՝ առանց մասնակիցների տարիքային սահմանափակման: Տասնմեկ մասնակից համույթների թվում էր նաև Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Մելսիկ Մատինյան, խորհրդատու ղեկավար՝ Վլադիմիր Ռապացկի): Նվագախումբը հանդես եկավ Գրիգորյանի «Սասունցիների պար», Օֆենբախի «Օրփեոսը դժոխքից» օպերետի նախերգանքի, Պաուլսի «Մեղեդի», Ֆուկի «Սլավոնական պոլկա» և Այվազյանի «Հայրենիք» (մշակումը՝ Վ. Ռապացկու) կատարումներով և գրավեց երրորդ տեղը:

«Վարդանանց հետնորդներ» փողային նվագախումբը ստեղծվել է 2000 թ. թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի անմիջական նախաձեռնությամբ: «Վարդանանց հետնորդներն» ամեն տարի իրենց մասնակցությունն են բերում հանրապետական ու մարզային փառատոներին և նվագակցում տարբեր հանդիսություններին և տոնակատարություններին:

2003 թ. նվագախումբը մասնակցել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում կայացած հանրապետական միացյալ փողային նվագախմբերի համերգին: 2005 թ. «Վարդանանց հետնորդներ»-ը մասնակցեց Փողային նվագախմբերի փառատոնին՝ գրավելով 2-րդ տեղը: Այս տարի, մայիսի 9-ին, նվագախումբն իր մասնակցությունը բերեց Երևանի «Հաղթանակ» զբոսայգում կայացած Փողային նվագախմբերի մեծ համերգին: Նվագախումբը արդեն հինգ տարբեր կատարումներով հանդես է գալիս նաև «Ծիծեռնակ» ճամբարում:

ԱՍՏՂԻԿ ԱՍՐՅԱՆ
ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ